

**Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգ
Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ
պետությունների դատարանների միջև համագործակցության մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը,
մասնավորապես, դրա հոդվածներ 61«գ»-ն և 67«1»-ը,

հաշվի առնելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախաձեռնությունը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը³,

Քանի որ.

- 1) Եվրոպական միությունը նպատակ է հետապնդում պահպանել և զարգացնել Միությունը՝ որպես ազատության, անվտանգության և արդարադատության տարածք, որտեղ երաշխավորված է անձանց ազատ տեղաշարժը: Աստիճանաբար նման տարածք ձևավորելու համար Համայնքը պետք է ընդունի մի շարք ակտեր, այդ թվում՝ քաղաքացիական գործերով դատական համագործակցության վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ներքին շուկան պատշաճ գործի,
- 2) անհրաժեշտ է բարելավել և, մասնավորապես, պարզեցնել և արագացնել համագործակցությունը դատարանների միջև ապացույցներ ստանալու գործում, որպեսզի ներքին շուկան պատշաճ գործի,
- 3) 1999 թվականի հոկտեմբերի 15-ին և 16-ին Տամպերեում կայացած իր նիստի ընթացքում Եվրոպական խորհուրդը վերահաստատեց, որ պետք է մշակել միջսահմանային գործերը կարգավորող նոր դատավարական օրենսդրություն, մասնավորապես՝ ապացույցներ ստանալու վերաբերյալ,
- 4) այս բնագավառը գտնվում է Համաձայնագրի 65-րդ հոդվածի գործողության ոլորտում,
- 5) առաջարկվող կարգավորման նպատակը, այն է՝ քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու գործընթացում դատարանների միջև համագործակցության բարելավումը, չի կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, ուստի և, ավելի արդյունավետորեն կարող է իրագործվել Համայնքի մակարդակով: Համայնքն իրավասու է ակտեր ընդունել Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված լրացուցչության (subsidiarity) սկզբունքին համապատասխան: Նույն հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքի համաձայն, սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակներին հասնելու համար,

¹ OJ C 314, 3.11.2000 թ., էջ 2:

² 2001 թվականի մարտի 14-ի եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

³ 2001 թվականի փետրվարի 28-ի եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

6) մինչ այսօր, բոլոր անդամ պետությունների միջև չկա որևէ պարտադիր փաստաթուղթ ապացույցներ ստանալու վերաբերյալ: Արտերկրում քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու մասին Հաագայի 1970 թվականի մարտի 18-ի կոնվենցիան գործում է Եվրոպական միության միայն 11 անդամ պետությունների միջև,

7) հաշվի առնելով, որ որևէ անդամ պետության դատարանի վարույթում գտնվող քաղաքացիական կամ առևտրային գործով որոշում կայացնելու համար հաճախ շատ կարևոր է մեկ այլ անդամ պետության տարածքում ապացույց ստանալը, Համայնքի գործունեությունը չի կարող սահմանափակվել քաղաքացիական և առևտրային գործերով դատական ու արտադատական փաստաթղթերի փոխանցման ոլորտով, որը կարգավորվում է «Քաղաքացիական և առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերի հանձնման մասին» Խորհրդի (ԵՀ) 2000 թվականի մայիսի 29-ի թիվ 1348/2000 կանոնակարգով⁴: Ուստի, անհրաժեշտ է շարունակել ապացույցներ ստանալու ոլորտում անդամ պետությունների միջև համագործակցության բարելավումը,

8) քաղաքացիական կամ առևտրային գործերով դատական վարույթի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապացույցների ստացման վերաբերյալ հարցումների ներկայացումը և կատարումը կազմակերպել անդամ պետությունների դատարանների միջև անմիջական հաղորդակցության և հնարավոր ամենաարագ միջոցներով,

9) ապացույցների ստացման վերաբերյալ հարցումները ներկայացնելու արագությունն ապահովելու համար պետք է կիրառել բոլոր համապատասխան միջոցները՝ պայմանով, որ պահպանվեն ստացվող փաստաթղթի դյուրընթեռնելիության և արժանահավատության հետ կապված որոշ պայմաններ: Առավելագույն հստակություն և իրավական որոշակիություն երաշխավորելու համար, ապացույցների ստացման վերաբերյալ հարցումը պետք է ներկայացվի ձևաթղթով, որը լրացվում է հարցում ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության լեզվով կամ այդ պետության կողմից ընդունելի մեկ այլ լեզվով: Նույն պատճառով, համապատասխան դատարանների միջև հետագա հաղորդակցության համար անհրաժեշտ է հնարավորինս օգտագործել որոշակի ձևաթղթեր,

10) ապացույցների ստացման վերաբերյալ հարցումը պետք է կատարվի արագացված կարգով: Եթե հարցման կատարումը հարցում ստացած դատարանի կողմից հնարավոր չէ դրա ստացումից հետո 90 օրվա ընթացքում, ապա վերջինս համապատասխանաբար տեղեկացնում է հարցումը ներկայացրած դատարանին՝ նշելով հարցման կատարումը խոչընդոտող պատճառները,

11) սույն Կանոնակարգի արդյունավետությունը երաշխավորելու նպատակով, ապացույցների ստացման վերաբերյալ հարցման կատարումը մերժելու հնարավորությունը պետք է խստորեն սահմանափակել միայն բացառիկ իրավիճակներով,

12) հարցում ստացած դատարանն այդ հարցումը կատարում է իր գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն,

13) Կողմերը և, առկայության դեպքում, նրանց ներկայացուցիչները պետք է կարողանան ներկա գտնվել ապացույցների ստացումն իրականացնելիս, եթե դա նախատեսված է հարցումը ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով, որպեսզի կարողանան հետևել ընթացակարգին՝ հարցումը ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետությունում ապացույց ստանալու կարգի հետ համեմատելի կարգով: Նրանք պետք է նաև իրավունք ունենան պահանջելու ապահովել իրենց մասնակցությունը, որպեսզի ավելի ակտիվ դեր ունենան ապացույցների ստացման գործընթացում: Այդուհանդերձ, նրանց մասնակցության պայմանները պետք է որոշվեն

⁴ ՊՏ L 160, 30.6.2000թ., էջ 37:

հարցում ստացած դատարանի կողմից՝ վերջինիս գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն,

14) հարցում ներկայացրած դատարանի ներկայացուցիչները պետք է կարողանան ներկա գտնվել ապացույցների ստացումն իրականացնելիս, եթե դա թույլատրելի է հարցումը ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով, որպեսզի ավելի լավ հնարավորություն ունենան գնահատելու ապացույցները: Նրանք պետք է նաև իրավունք ունենան պահանջել ապահովելու իրենց մասնակցությունը՝ հարցում ստացած դատարանի սահմանած պայմաններով վերջինիս գտնվելու վայրի անդամ պետության իրավունքին համապատասխան, որպեսզի ավելի ակտիվ դեր ունենան ապացույցների ստացման գործընթացում,

15) ապացույցների ստացումը հեշտացնելու նպատակով անդամ պետությունում գտնվող դատարանը պետք է հնարավորություն ունենա տվյալ անդամ պետության իրավունքին համապատասխան անմիջականորեն ապացույցներ ստանալ մեկ այլ անդամ պետությունում, եթե վերջինս համաձայն է դրան, ընդ որում՝ հարցում ստացած անդամ պետության կենտրոնական մարմնի կամ իրավասու մարմնի սահմանած պայմաններով,

16) 10-րդ հոդվածի համաձայն հարցման կատարումը չի կարող առաջացնել հարկերի կամ ծախսերի փոխհատուցման որևէ պահանջ: Այդուհանդերձ, եթե հարցում ստացած դատարանը պահանջում է փոխհատուցում, ապա փորձագետներին և թարգանիչներին վճարված գումարները, ինչպես նաև հոդված 10«3» և «4»-ի կիրառման հետևանքով ծագած ծախսերը չպետք է կրի այդ դատարանը: Նման պարագայում հարցում ներկայացրած դատարանը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի՝ ապահովելու անհապաղ փոխհատուցումը: Այն դեպքում, երբ պահանջվում է փորձագետի եզրակացություն, հարցում ստացած դատարանը, նախքան հարցումը կատարելը, կարող է հարցում ներկայացրած դատարանից ծախսերի դիմաց համապատասխան դեպոզիտ կամ կանխավճար խնդրել,

17) սույն Կանոնակարգը գերակայում է իր գործողության ոլորտում գտնվող հարցերի շուրջ անդամ պետությունների միջև կնքված միջազգային կոնվենցիաների դրույթների նկատմամբ: Անդամ պետություններն ազատ են կնքելու համաձայնագրեր կամ ձեռք բերելու պայմանավորվածություններ, որոնց նպատակն է հեշտացնել համագործակցությունն ապացույցներ ստանալու ոլորտում,

18) սույն Կանոնակարգի համաձայն փոխանցվող տեղեկությունները պետք է պաշտպանված լինեն: Քանի որ «Անհատական տվյալների մշակման հետ կապված անհատների պաշտպանության և այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 95/46/ԵՀ հրահանգը⁵, ինչպես նաև «Հեռահաղորդակցության ոլորտում անհատական տվյալների մշակման և անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 97/66/ԵՀ հրահանգը⁶ կիրառվում են, ապա սույն Կանոնակարգում անհրաժեշտ չէ տվյալների պաշտպանության վերաբերյալ հատուկ դրույթներ ամրագրել,

19) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն⁷, որով սահմանվում է Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման կարգը,

⁵ ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31:

⁶ ՊՏ L 24, 30.1.1998թ., էջ 1:

⁷ ՊՏ L 184, 17.7.1999թ., էջ 23:

20) սույն Կանոնակարգի պատշաճ կիրարկումն ապահովելու համար Հանձնաժողովը պետք է հետևի դրա կիրառությանը և առաջարկի անհրաժեշտ փոփոխություններ,

21) Միացյալ Թագավորությունը և Իռլանդիան, Եվրոպական միության մասին համաձայնագրին ու Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրին կից՝ «Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման մասին» արձանագրության 3-րդ հոդվածի հիման վրա, ծանուցել են սույն Կանոնակարգի ընդունմանն ու կիրառմանը մասնակցելու իրենց ցանկության մասին,

22) Դանիան, Եվրոպական միության մասին համաձայնագրին և Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրին կից՝ «Դանիայի դիրքորոշման մասին» արձանագրության 1-ին և 2-րդ հոդվածների հիման վրա, չի մասնակցում սույն Կանոնակարգի ընդունմանը, ուստի՝ պարտավորություն չի կրում հետևելու դրա դրույթներին և, վերջիններս չեն կիրառվում Դանիայի նկատմամբ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է քաղաքացիական և առևտրային գործերի նկատմամբ, երբ որևէ անդամ պետության դատարան տվյալ պետության իրավունքին համապատասխան հարցում է ներկայացնում՝

ա) մեկ այլ անդամ պետության իրավասու դատարան՝ ապացույցներ ստանալու, կամ

բ) մեկ այլ անդամ պետությունում անմիջականորեն ապացույցներ ստանալու վերաբերյալ:

2. Հարցում չի կարող ներկայացվել այնպիսի ապացույցներ ստանալու համար, որոնք նախատեսված չեն արդեն հարուցված կամ ակնկալվող դատական վարույթներում օգտագործելու համար:

3. Սույն Կանոնակարգում «անդամ պետություն» նշանակում է բոլոր անդամ պետությունները՝ բացառությամբ Դանիայի:

Հոդված 2

Անմիջական հաղորդակցությունը դատարանների միջև

1. Հոդված 1«1»«ա»-ի համաձայն ներկայացված հարցումները (այսուհետ՝ «հարցումներ») պետք է ներկայացվեն այն դատարանի կողմից, որում վարույթ է հարուցվել կամ

նախատեսվում է հարուցել (այսուհետ՝ «հարցում ներկայացրած դատարան»), ուղղակիորեն մեկ այլ անդամ պետության իրավասու դատարանին (այսուհետ՝ «հարցում ստացած դատարան»), ապացույցների ստացում իրականացնելու համար:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է կազմի այն դատարանների ցանկը, որոնք իրավասու են սույն Կանոնակարգի համաձայն ապացույցների ստացում իրականացնել: Ցանկում պետք է նաև նշված լինի դատարանների տարածքային և, համապատասխան դեպքերում, հատուկ ընդդատությունը:

Հոդված 3

Կենտրոնական մարմինը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է կենտրոնական մարմին, որը պատասխանատու է՝

ա) դատարաններին տեղեկություններ տրամադրելու համար.

բ) հարցման հետ կապված ծագող դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ լուծումներ փնտրելու համար.

գ) բացառիկ դեպքերում, հարցում ներկայացրած դատարանի խնդրանքով, հարցումն իրավասու դատարանին ուղղելու համար:

2. Դաշնային պետությունները, այն պետությունները, որտեղ գործում են մի քանի իրավական համակարգեր, կամ ինքնավար տարածքային միավորներ ունեցող պետություններն իրավասու են նշանակել մեկից ավելի կենտրոնական մարմիններ:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն նաև նշանակում է սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված կենտրոնական մարմինը կամ մեկ կամ մի քանի իրավասու մարմին (մարմիններ), որոնք պատասխանատու կլինեն 17-րդ հոդվածի համաձայն հարցումների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

ԳԼՈՒԽ II

ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԸ

Բաժին 1

Հարցումը ներկայացնելը

Հոդված 4

Հարցման ձևը և բովանդակությունը

1. Հարցումը կազմվում է՝ օգտագործելով «Ա» ձևը կամ, համապատասխան դեպքերում, հավելվածում ներկայացված I ձևը: Այն պետք է պարունակի հետևյալ մանրամասները՝

ա) հարցումը ներկայացրած և, համապատասխան դեպքերում, հարցումը ստացող դատարանների անվանումները.

բ) վարույթի մասնակիցների և, առկայության դեպքում, նրանց ներկայացուցիչների անունները և հասցեները.

գ) գործի բնույթը և առարկան, ինչպես նաև գործի փաստական հանգամանքների համառոտ շարադրանքը.

դ) ապացույցների ստացման գործընթացի նկարագրությունը.

ե) եթե հարցումը վերաբերում է անձին հարցաքննելուն, ապա՝

- այն անձի (անձանց) անունը (անունները) և հասցեն (հասցեները), ով (ովքեր) պետք է հարցաքննվի (հարցաքննվեն).

- այն անձին (անձանց) ուղղվելիք հարցերը, ով (ովքեր) պետք է հարցաքննվի (հարցաքննվեն) կամ փաստական հանգամանքների շարադրանքը, որոնց վերաբերյալ նա (նրանք) պետք է հարցաքննվի (հարցաքննվեն).

- համապատասխան դեպքերում, նշում՝ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի մասին՝ հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն.

- հարցաքննությունը երդմամբ կամ, դրա փոխարեն, հանդիսավոր հայտարարությամբ անցկացնելու ցանկացած պահանջ, ինչպես նաև կիրառվելիք որևէ հատուկ ձև.

- համապատասխան դեպքերում, ցանկացած այլ տեղեկություն, որ հարցում ներկայացրած դատարանն անհրաժեշտ է համարում.

զ) եթե դիմումը վերաբերում է ապացույց ստանալու որևէ այլ ձևի՝ զննության ենթակա փաստաթղթերը կամ այլ առարկաները.

է) համապատասխան դեպքերում, ցանկացած հարցում՝ համաձայն հոդվածներ 10«3» և «4»-ի, ինչպես նաև 11-րդ և 12-րդ, և դրանց կիրառության համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն:

2. Հարցումը և դրան կից բոլոր փաստաթղթերը պետք է զերծ լինեն նույնականացումից և այլ համարժեք ձևականությունների պահանջից:

3. Այն փաստաթղթերը, որոնք հարցում ներկայացրած դատարանն անհրաժեշտ է համարում կցել՝ հարցումը կատարելու նպատակով, պետք է ուղեկցվեն կից թարգմանությամբ՝ այն լեզվով, որով կազմվել է հարցումը:

Հոդված 5

Լեզուն

Հարցումը և սույն Կանոնակարգի համաձայն իրականացվող հաղորդակցությունը կատարվում են հարցում ստացած անդամ պետության պաշտոնական լեզվով կամ, եթե այդ անդամ պետությունում կան մի քանի պաշտոնական լեզուներ, ապա՝ այն վայրի պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով, որտեղ հարցմանը համաձայն

իրականացվելու է ապացույցների ստացումը կամ ցանկացած այլ լեզվով, որի՝ իր համար ընդունելի լինելու մասին նշել է հարցում ստացած անդամ պետությունը: Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է նշի Եվրոպական համայնքի կառույցների այն պաշտոնական լեզուն կամ լեզուները՝ բացառությամբ իր պաշտոնական լեզվի, որը (որոնք) ընդունելի է (են) իր համար՝ ձևերը լրացնելիս:

Հոդված 6

Հարցումների և այլ հաղորդագրությունների փոխանցումը

Սույն Կանոնակարգի համաձայն հարցումները և այլ հաղորդագրությունները պետք է ուղարկվեն հնարավոր ամենաարագ այն միջոցներով, որոնց՝ իր համար ընդունելի լինելու մասին նշել է հարցում ստացած անդամ պետությունը: Փոխանցումը կարող է կատարվել ցանկացած համապատասխան միջոցով՝ պայմանով, որ ստացված փաստաթուղթը ստույգ արտացոլի փոխանցված փաստաթղթի բովանդակությունը, և որպեսզի դրանում առկա ողջ տեղեկատվությունն ընթեռնելի լինի:

Բաժին 2

Հարցման ստացումը

Հոդված 7

Հարցման ստացումը

1. Հարցումն ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում հարցում ստացած իրավասու դատարանը հարցում ներկայացրած դատարանին ուղարկում է ստացման հաստատում՝ այդ նպատակով օգտագործելով հավելվածում գետեղված «Բ» ձևը: Եթե հարցումը չի համապատասխանում 5-րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին, ապա հարցում ստացած դատարանն այդ մասին նշում է կատարում հարցումն ստանալու հաստատման մեջ:

2. Եթե հավելվածում գետեղված «Ա» ձևով ներկայացված և 5-րդ հոդվածով նախատեսված պայմաններին համապատասխանող հարցման կատարումը չի մտնում այն դատարանի իրավասության մեջ, որին ներկայացվել է տվյալ հարցումը, ապա վերջինս պետք է հարցումը վերահասցեագրի իր անդամ պետության համապատասխան իրավասու դատարանին և հավելվածում գետեղված «Ա» ձևի միջոցով այդ մասին տեղեկացնի հարցում ներկայացրած դատարանին:

Հոդված 8

Թերի հարցումը

1. Եթե հարցումը չի կարող կատարվել այն պատճառով, որ չի պարունակում 4-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ բոլոր տեղեկությունները, ապա հարցում ստացած դատարանն

այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան հարցումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, տեղեկացնում է հարցում ներկայացրած դատարանին՝ հավելվածում զետեղված «Գ» ձևի միջոցով, ինչպես նաև խնդրում, որպեսզի վերջինս ուղարկի պակասող տեղեկությունները՝ հստակ նշելով դրանք:

2. Եթե հարցումը չի կարող կատարվել այն պատճառով, որ հոդված 18«3»-ի համաձայն անհրաժեշտ է դեպոզիտ կամ կանխավճար, ապա հարցում ստացած դատարանը անհապաղ, բայց ոչ ուշ, քան հարցումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, հավելվածում զետեղված «Գ» ձևի միջոցով այդ մասին տեղեկացնում է հարցում ներկայացրած դատարանին, ինչպես նաև այն մասին, թե ինչպես պետք է ապահովվի դեպոզիտը կամ կանխավճարը: Հարցում ստացած դատարանը, օգտագործելով «Դ» ձևը, հաստատում է դեպոզիտի կամ կանխավճարի ստացումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան դեպոզիտի կամ կանխավճարի ստացումից հետո 10 օրվա ընթացքում:

Հոդված 9

Դիմումի ամբողջականացումը

1. Եթե հարցում ստացած դատարանը հարցման ստացումը հաստատելիս հոդված 7«1»-ի համաձայն նշել է, որ հարցումը չի համապատասխանում 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված պայմաններին կամ հարցում ներկայացրած դատարանին 8-րդ հոդվածի համաձայն տեղեկացրել է, որ հարցումը չի կարող կատարվել, քանի որ այն չի պարունակում 4-րդ հոդվածի համաձայն անհրաժեշտ բոլոր տեղեկությունները, 10-րդ հոդվածով նախատեսված ժամկետի հաշվարկն սկսվում է այն ժամանակ, երբ հարցում ստացած դատարանը հարցումն ստանում է ամբողջական տեսքով:

2. Եթե հարցում ստացած դատարանը հոդված 18«3»-ի համաձայն խնդրել է դեպոզիտ կամ կանխավճար, ապա նշված ժամկետի հաշվարկը սկսվում է դեպոզիտի կամ կանխավճարի վճարման պահից:

Բաժին 3

Ապացույցների ստացումը հարցում ստացած դատարանի կողմից

Հոդված 10

Ընդհանուր դրույթներ հարցման կատարման մասին

1. Հարցում ստացած դատարանը հարցումը կատարում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալուց հետո 90 օրվա ընթացքում:

2. Հարցում ստացած դատարանը հարցումը կատարում է իր անդամ պետության իրավունքին համապատասխան:

3. Հարցում ներկայացրած դատարանն իրավասու է հավելվածում զետեղված «Ա» ձևի միջոցով պահանջել, որպեսզի հարցումը կատարվի իր գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով նախատեսված հատուկ ընթացակարգով: Հարցում ստացած դատարանը պետք է բավարարի այդ պահանջը՝ բացառությամբ եթե նշված ընթացակարգն անհամատեղելի է

հարցում ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի հետ կամ կապված է լուրջ գործնական դժվարությունների հետ: Եթե հարցում ստացած դատարանը չի բավարարում պահանջը նշված որևէ պատճառով, այն պետք է հավելվածում զետեղված «Ե» ձևի միջոցով այդ մասին տեղեկացնի հարցում ներկայացրած դատարանին:

4. Հարցում ներկայացրած դատարանը կարող է խնդրել, որպեսզի հարցում ստացած դատարանն ապացույցների ստացում իրականացնելիս օգտագործի հաղորդակցության տեխնոլոգիաներ, մասնավորապես՝ վիդեոկոնֆերանսի և հեռախոսային կոնֆերանսի հնարավորությունները:

Հարցում ստացած դատարանը պետք է բավարարի այդ պահանջը՝ բացառությամբ եթե դա անհամատեղելի է հարցում ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի հետ կամ կապված է գործնական լուրջ դժվարությունների հետ:

Եթե հարցում ստացած դատարանը չի բավարարում այդ պահանջը նշված որևէ պատճառով, այն պետք է հավելվածում զետեղված «Ե» ձևի միջոցով այդ մասին տեղեկացնի հարցում ներկայացրած դատարանին:

Եթե վերը նշված տեխնիկական միջոցները հասանելի չեն հարցում ներկայացրած կամ հարցում ստացած դատարանին, ապա այդ միջոցների հասանելիությունը փոխադարձ համաձայնությամբ կարող են ապահովել դատարանները:

Հոդված 11

Կատարումը կողմերի ներկայությամբ և մասնակցությամբ

1. Եթե հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով նախատեսված է նման հնարավորություն, ապա կողմերը և, առկայության դեպքում, նրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա գտնվելու հարցում ստացած դատարանի կողմից ապացույցների ստացմանը:

2. Հարցում ներկայացրած դատարանն իր հարցմամբ տեղեկացնում է հարցում ստացած դատարանին այն մասին, որ կողմերը և, առկայության դեպքում, նրանց ներկայացուցիչները ներկա են գտնվելու և, անհրաժեշտության դեպքում, հավելվածում զետեղված «Ա» ձևի միջոցով խնդրում ապահովել նրանց մասնակցությունը: Սույն տեղեկությունը կարող է նաև տրամադրվել ցանկացած այլ հարմար ժամանակ:

3. Եթե խնդրանք է ներկայացվում ապահովել կողմերի և, առկայության դեպքում, նրանց ներկայացուցիչների մասնակցությունը ապացույցների ստացման իրականացմանը, ապա հարցում ստացած դատարանը պետք է 10-րդ հոդվածի համաձայն սահմանի նրանց մասնակցության պայմանները:

4. Հարցում ստացած դատարանը հավելվածում զետեղված «Զ» ձևի միջոցով կողմերին և, առկայության դեպքում, նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարույթի անցկացման ժամանակի և վայրի մասին, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, նրանց մասնակցության պայմանների մասին:

5. Սույն հոդվածի 1-4-րդ պարբերությունները չեն շոշափում ապացույցների ստացում իրականացնելու գործընթացին կողմերի և, առկայության դեպքում, նրանց ներկայացուցիչների ներկայությունը կամ մասնակցությունը հարցում ստացած դատարանի կողմից խնդրելու հնարավորությունը, եթե այդ հնարավորությունը նախատեսված է տվյալ դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով:

Հոդված 12

Կատարումը հարցում ներկայացրած դատարանի ներկայացուցիչների ներկայությամբ և մասնակցությամբ

1. Եթե դա չի հակասում հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքին, ապա հարցում ներկայացրած դատարանի ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա գտնվելու հարցում ստացած դատարանի կողմից ապացույցների ստացման գործընթացին:
2. Սույն հոդվածի իմաստով «ներկայացուցիչ»-ը ներառում է հարցում ներկայացրած դատարանի կողմից վերջինիս գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն լիազորված դատական ծառայողներին: Հարցում ներկայացրած դատարանն իրավասու է նաև իր գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն լիազորել ցանկացած այլ անձի, օրինակ՝ փորձագետի:
3. Հարցում ներկայացրած դատարանը իր հարցման մեջ տեղեկացնում է հարցում ստացած դատարանին, որ իր ներկայացուցիչները ներկա են գտնվելու, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, որ նրանց մասնակցության խնդրանք է ներկայացվել հավելվածում զետեղված «Ա» ձևի միջոցով: Սույն տեղեկությունը կարող է նաև տրամադրվել ցանկացած այլ հարմար ժամանակ:
4. Եթե խնդրանք է ներկայացվում ապահովել հարցում ներկայացրած դատարանի ներկայացուցիչների մասնակցությունն ապացույցների ստացման իրականացմանը, ապա հարցում ստացած դատարանը պետք է 10-րդ հոդվածի համաձայն սահմանի նրանց մասնակցության պայմանները:
5. Հարցում ստացած դատարանը հավելվածում զետեղված «Զ» ձևի միջոցով հարցում ներկայացրած դատարանին ծանուցում է վարույթի անցկացման ժամանակի և վայրի, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, ներկայացուցիչների մասնակցության պայմանների մասին:

Հոդված 13

Հարկադրանքի միջոցները

Անհրաժեշտության դեպքում, հարցում ստացած դատարանը հարցումը կատարելիս իր անդամ պետության իրավունքով նախատեսված դեպքերում և չափով կիրառում է համապատասխան հարկադրանքի միջոցներ՝ այդ նպատակով իր պետական մարմինների կամ շահագրգիռ կողմերից որևէ մեկի ներկայացրած խնդրանքի կատարման համար:

Հոդված 14

Կատարումից հրաժարվելը

1. Անձից ցուցմունք վերցնելու վերաբերյալ հարցումը չի կատարվում, եթե տվյալ անձն օգտվում է ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքից, կամ պնդում է, որ իրեն արգելված է ցուցմունք տալ՝

ա) հարցում ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով, կամ

բ) հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով, և եթե ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի մասին նշվել է հարցման մեջ կամ, անհրաժեշտության դեպքում, հարցում ստացած դատարանի պահանջով հաստատվել է հարցում ներկայացրած դատարանի կողմից:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված հիմքերից բացի, հարցման կատարումը կարող է մերժվել, միայն եթե.

ա) հարցումը չի մտնում սույն Կանոնակարգի՝ 1-ին հոդվածով նախատեսված գործողության ոլորտի մեջ, կամ

բ) հարցման կատարումն այն ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքին համապատասխան չի մտնում դատական իշխանության գործառույթների մեջ, կամ

գ) հարցում ներկայացրած դատարանը չի բավարարում հարցում ստացած դատարանի կողմից 8-րդ հոդվածի համաձայն ներկայացված՝ հարցումն ամբողջականացնելու խնդրանքը հարցում ստացած դատարանի նման խնդրանքից հետո 30 օրվա ընթացքում, կամ

դ) հոդված 18«3»-ի համաձայն պահանջվող դեպոզիտը կամ կանխավճարը չի կատարվում հարցում ստացած դատարանի կողմից նման խնդրանք ներկայացնելուց հետո 60 օրվա ընթացքում:

3. Հարցում ստացած դատարանի կողմից կատարումը չի կարող մերժվել բացառապես այն հիմքով, թե վերջինիս գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն այդ անդամ պետության դատարանը բացառիկ իրավասություն ունի տվյալ գործի առարկայի նկատմամբ, կամ թե այդ անդամ պետության իրավունքով նախատեսված չէ այդ կապակցությամբ գործողություններ կատարելու իրավունքը:

4. Եթե հարցման կատարումը մերժվում է սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված հիմքերից որևէ մեկով, ապա հարցում ստացած դատարանը, հարցումը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում, հավելվածում զետեղված «Ը» ձևի միջոցով հարցում ներկայացրած դատարանին ծանուցում է այդ մասին:

Հոդված 15

Ուշացման մասին ծանուցումը

Եթե հարցում ստացած դատարանն ի վիճակի չէ հարցումը կատարել այն ստանալուց հետո 90 օրվա ընթացքում, ապա այն Հավելվածում զետեղված «Է» ձևի միջոցով այդ մասին տեղեկացնում է հարցում ներկայացրած դատարանին: Նման դեպքում պետք է նշվեն ուշացման հիմքերը, ինչպես նաև այն մոտավոր ժամանակահատվածը, որն ըստ հարցում ստացած դատարանի ակնկալիքների, կպահանջվի հարցումը կատարելու համար:

Հոդված 16

Դիմումի կատարմանը հաջորդող ընթացակարգը

Հարցում ստացած դատարանը հարցում ներկայացրած դատարանին անհապաղ ուղարկում է հարցման կատարման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, վերադարձնում հարցում ներկայացրած դատարանից ստացված փաստաթղթերը: Փաստաթղթերին կից ուղարկվում է կատարման հաստատումը՝ օգտագործելով հավելվածում զետեղված «Ը» ձևը:

Բաժին 4

Հարցում ներկայացրած դատարանի կողմից ապացույցների անմիջական ստացումը

Հոդված 17

1. Երբ որևէ դատարան մեկ այլ անդամ պետությունում անմիջականորեն ապացույցներ ստանալու վերաբերյալ հարցում է ներկայացնում, այն հարցումն ուղղում է տվյալ պետության՝ հոդված 3«3»-ում նշված կենտրոնական մարմնին կամ իրավասու մարմնին՝ օգտագործելով հավելվածում զետեղված «Թ» ձևը:

2. Ապացույցների անմիջական ստացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դա կատարվում է կամավոր հիմունքով՝ առանց հարկադրանքի միջոցներ կիրառելու անհրաժեշտության:

Եթե ապացույցների անմիջական ստացումը կապված է որևէ անձի կողմից ցուցմունք տալու հետ, ապա հարցում ներկայացրած դատարանն այդ անձին տեղեկացնում է, որ ապացույցների ստացումը կատարվում է կամավոր հիմունքով:

3. Ապացույցների ստացումը կատարվում է դատական ծառայողի կամ որևէ այլ անձի, օրինակ՝ փորձագետի կողմից, որը նշանակվում է հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն:

4. Հարցումն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հարցում ստացած անդամ պետության կենտրոնական մարմինը կամ իրավասու մարմինը հարցում ներկայացրած դատարանին «Ժ» ձևի միջոցով տեղեկացնում է հարցումն ընդունելու մասին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, տվյալ անդամ պետության իրավունքի համաձայն ապացույցների ստացումն իրականացնելու պայմանների մասին:

Մասնավորապես, կենտրոնական մարմինը կամ իրավասու մարմինը կարող է իր անդամ պետության որևէ դատարանի հանձնարարել, որպեսզի վերջինս մասնակցի ապացույցների ստացման գործընթացին՝ ապահովելու համար սույն հոդվածի և սահմանված պայմանների պատշաճ կիրառումը:

Կենտրոնական մարմինը կամ իրավասու մարմինը խրախուսում է հաղորդակցության տեխնոլոգիաների, օրինակ՝ վիդեոկոնֆերանսի և հեռախոսային կոնֆերանսի օգտագործումը:

5. Կենտրոնական մարմինը կամ իրավասու մարմինը կարող է հրաժարվել ապացույցների անմիջական ստացման վերաբերյալ հարցումը բավարարելուց, միայն եթե.

ա) հարցումը չի մտնում սույն Կանոնակարգի՝ 1-ին հոդվածով նախատեսված գործողության ոլորտի մեջ.

բ) հարցումը չի պարունակում 4-րդ հոդվածով պահանջվող բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, կամ

գ) ապացույցների անմիջական ստացում իրականացնելը հակասում է իր անդամ պետության իրավունքի հիմնարար սկզբունքներին:

6. Չսահմանափակելով սույն հոդվածի 4-րդ պարբերությամբ նախատեսված պայմանների գործողությունը՝ հարցում ներկայարած դատարանը հարցումը կատարում է իր գտնվելու վայրի անդամ պետության իրավունքին համապատասխան:

Բաժին 5

Ծախսերը

Հոդված 18

1. 10-րդ հոդվածի համաձայն հարցման կատարումը չի կարող հարկերի կամ ծախսերի փոխհատուցման որևէ պահանջ առաջացնել:

2. Այդուհանդերձ, եթե հարցում ստացած դատարանը փոխհատուցում է պահանջում, ապա հարցում ներկայացրած դատարանն ապահովում է՝ .

- փորձագետներին և թարգմանիչներին վճարված գումարների, և

- հոդված 10«3» և «4»-ի կիրառման հետևանքով ծագած ծախսերի

անհապաղ փոխհատուցում:

Սույն վճարները կամ ծախսերը կատարելու՝ կողմերի պարտավորությունները կարգավորվում են հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով:

3. Այն դեպքում, երբ պահանջվում է փորձագետի եզրակացություն, հարցում ստացած դատարանը կարող է, նախքան հարցման կատարումը, խնդրել, որպեսզի հարցում ներկայացրած դատարանը ծախսերի փոխհատուցման համար համապատասխան դեպոզիտ կամ կանխավճար կատարի: Բոլոր մյուս դեպքերում դեպոզիտը կամ կանխավճարը չի կարող հարցման կատարման նախապայման լինել:

Դեպոզիտը կամ կանխավճարը պետք է կատարեն կողմերը, եթե այդպես նախատեսված է հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով:

ԳԼՈՒԽ III

Հոդված 19

Կիրարկման կանոնները

1. Հանձնաժողովը կազմում և պարբերաբար թարմացնում է մի ուղեցույց, որը պետք է նաև էլեկտրոնային տարբերակով մատչելի լինի և պարունակի 22-րդ հոդվածի համաձայն անդամ պետությունների տրամադրած տեղեկությունները և 21-րդ հոդվածի համաձայն գործող համաձայնագրերն ու պայմանավորվածությունները:
2. Հավելվածում գետեղված օրինակելի ձևերի թարմացումը կամ դրանցում տեխնիկական բնույթի փոփոխությունները կատարվում են հոդված 20«2»-ով նախատեսված խորհրդատվական ընթացակարգին համապատասխան:

Հոդված 20

Կոմիտեն

1. Հանձնաժողովին պետք է աջակցի Կոմիտեն:
2. Այն դեպքում, երբ հղում է արվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները:
3. Կոմիտեն ընդունելու է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 21

Անդամ պետությունների միջև առկա կամ հնարավոր համաձայնագրերի, կամ պայմանավորվածությունների հետ առնչությունը

1. Սույն Կանոնակարգը գերակայում է նույն խնդրո առարկայի վերաբերյալ անդամ պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների այլ դրույթների նկատմամբ, մասնավորապես՝ «Քաղաքացիական դատավարության մասին» Հաագայի 1954 թվականի մարտի 1-ի կոնվենցիայի և «Քաղաքացիական կամ առևտրային գործերով արտերկրում ապացույցներ ստանալու մասին» Հաագայի 1970 թվականի մարտի 18-ի կոնվենցիայի նկատմամբ՝ դրանց մասնակից անդամ պետությունների միջև հարաբերություններում:
2. Սույն Կանոնակարգը չի խոչընդոտում անդամ պետություններին ունենալ կամ կնքել համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ իրենցից երկուսի կամ շատերի միջև, որոնց նպատակն է էլ ավելի հեշտացնել ապացույցների ստացումը՝ պայմանով, որ դրանք չհակասեն սույն Կանոնակարգին:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին ուղարկում են՝

ա) մինչև 2003 թվականի հուլիսի 1-ը՝ սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված՝ անդամ պետությունների միջև գործող համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների պատճենները.

բ) սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված՝ անդամ պետությունների միջև կնքված համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների պատճենները, ինչպես նաև այն համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների նախագծերը, որոնք իրենք մտադիր են կնքել, և

գ) նշված համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների ցանկացած փոփոխություն կամ դադարեցում:

Հոդված 22

Տեղեկությունների փոխանցումը

Մինչև 2003 թվականի հուլիսի 1-ը յուրաքանչյուր անդամ պետություն պետք է Հանձնաժողովին փոխանցի՝

ա) հոդված 2«2»-ով նախատեսված ցանկը՝ նշելով դատարանների տարածքային ընդդատությունը և, համապատասխան դեպքերում, նաև հատուկ ընդդատությունը.

բ) 3-րդ հոդվածի համաձայն՝ կենտրոնական մարմինների և իրավասու մարմինների անվանումները և հասցեները, նշելով նաև դրանց տարածքային ընդդատությունը.

գ) հարցումների ստացման համար անհրաժեշտ այն տեխնիկական միջոցները, որոնք գտնվում են հոդված 2«2»-ի համաձայն ներկայացված ցանկում ներառված դատարանների տրամադրության տակ.

դ) հարցման համար ընդունելի լեզուները՝ համաձայն 5-րդ հոդվածի:

Անդամ պետությունները Հանձնաժողովին հայտնում են նշված տեղեկությունների ցանկացած հետագա փոփոխության մասին:

Հոդված 23

Վերանայումը

2007 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ, իսկ դրանից հետո՝ հինգ տարին մեկ անգամ, Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին, Խորհրդին և Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ներկայացնում է սույն Կանոնակարգի կիրարկման մասին զեկույց՝ առանձնակի ուշադրություն դարձնելով հոդված 3«1»«գ»-ի և 3«3»-ի, ինչպես նաև 17-րդ և 18-րդ հոդվածների գործնական կիրառությանը:

Հոդված 24

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հուլիսի 1-ից:

2. Սույն Կանոնակարգը կիրառվում է 2004 թվականի հունվարի 1-ից՝ բացառությամբ 19-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածների, որոնք կիրառվում են 2001 թվականի հուլիսի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և գործում է անմիջականորեն՝ Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրի հիման վրա:

Կատարված է Բրյուսելում, 2001 թվականի մայիսի 28-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Թ. Բոդստրյոմ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՁԵՎ Ա

Ապացույցների ստացման վերաբերյալ հարցում

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի 2001(ԵՀ) թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի 4-րդ հոդված (ՊՏ L 174, 27.06.2001թ, էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Հարցում ստացած դատարանի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարան
 - 3.1. Անվանումը
 - 3.2. Հասցեն
 - 3.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 3.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 3.2.3. Երկիրը
 - 3.3. Հեռ.
 - 3.4. Ֆաքս
 - 3.5. Էլ-փոստ
4. Հարցում ստացած դատարան
 - 4.1. Անվանումը
 - 4.2. Հասցեն
 - 4.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 4.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 4.2.3. Երկիրը
 - 4.3. Հեռ.
 - 4.4. Ֆաքս
 - 4.5. Էլ-փոստ
5. Հայցվորի կողմից ներկայացված հայցը
 - 5.1. Անունը
 - 5.2. Հասցեն
 - 5.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 5.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 5.2.3. Երկիրը

5.3. Հեռ.

5.4. Ֆաքս

5.5. Էլ-փոստ

6. Հայցվորի ներկայացուցիչները

6.1. Անունը

6.2. Հասցեն

6.2.1. Փողոցը և փոստարկղի համարը

6.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը

6.2.3. Երկիրը

6.3. Հեռ.

6.4. Ֆաքս

6.5. Էլ-փոստ

7. Պատասխանողի դեմ

7.1. Անունը

7.2. Հասցեն

7.2.1. Փողոցը և փոստարկղի համարը

7.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը

7.2.3. Երկիրը

7.3. Հեռ.

7.4. Ֆաքս

7.5. Էլ-փոստ

8. Պատասխանողի ներկայացուցիչները

8.1. Անունը

8.2. Հասցեն

8.2.1. Փողոցը և փոստարկղի համարը

8.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը

8.2.3. Երկիրը

8.3. Հեռ.

8.4. Ֆաքս

8.5. Էլ-փոստ

9. Կողմերի ներկայությունը և մասնակցությունը

9.1. Կողմերը և նրանց ներկայացուցիչները, եթե այդպիսիք կան, ներկա կլինեն ապացույցների ստացման գործընթացին

9.2. Կողմերի և նրանց ներկայացուցիչների, եթե այդպիսիք կան, մասնակցության խնդրանք է ներկայացվում.

10. Հարցում ներկայացրած դատարանի ներկայացուցիչների ներկայությունը և մասնակցությունը

10.1. Ներկայացուցիչները ներկա կլինեն ապացույցների ստացման գործընթացին.

10.2. Ներկայացուցիչների մասնակցության խնդրանք է ներկայացվում.

10.2.1. Անունը

10.2.2. Պաշտոնը

10.2.3. Գործառույթները

10.2.4. Խնդիրները

11. Գործի բնույթը և առարկան, ինչպես նաև գործի փաստական հանգամանքների համառոտ շարադրանք (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

12. Իրականացվելիք ապացույցների ստացումը

12.1. Իրականացվելիք ապացույցների ստացման գործընթացի նկարագրություն (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

12.2. Վկաների հարցաքննություն

12.2.1. Անունը և ազգանունը

12.2.2. Հասցեն

12.2.3. Հեռ.

12.2.4. Ֆաքս

12.2.5. Էլ-փոստ

12.2.6. Վկային ուղղվելիք հարցերը կամ այն փաստերի շարադրանքը, որոնց վերաբերյալ նրանք պետք է հարցաքննվեն (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

12.2.7. Վկայություն տալուց հրաժարվելու իրավունք՝ հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

12.2.8. Խնդրում ենք հարցաքննել վկային.

12.2.8.1. Երդմամբ

12.2.8.2. հանդիսավոր հայտարարությամբ

12.2.9. Ցանկացած այլ տեղեկություն, որ հարցում ներկայացրած դատարանն անհրաժեշտ է համարում (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

12.3. Այլ ապացույցների ստացում

12.3.1. Ստուգման ենթակա փաստաթղթերը և ապացույցների ստացման գործընթացի նկարագրությունը (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

12.3.2. Ստուգման ենթակա իրերը և ապացույցների ստացման գործընթացի նկարագրությունը (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

13. Խնդրում ենք հարցումը կատարել

13.1. Հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով նախատեսված հատուկ ընթացակարգի համաձայն (հոդված 10«3») և (կամ) օգտվելով հավելվածում նկարագրված հաղորդակցության տեխնոլոգիաներից (հոդված 10«4»)

13.2. Դրա կիրառման համար անհրաժեշտ են հետևյալ տեղեկությունները.

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

Հարցումն ուղարկելու մասին ծանուցում

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի հոդված 7«2»

(ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 1))

14. Դիմումը չի մտնում վերը նշված 4-րդ կետում նշված դատարանի իրավասության մեջ և ուղարկվել է.

14.1. Իրավասու դատարանի անվանումը

14.2. Հասցեն

14.2.1. Փողոցը և փոստարկղի համարը

14.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը

14.2.3. Երկիրը

14.3. Հեռ.

14.4. Ֆաքս

14.5. Էլ-փոստ

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Բ

Ապացույցների ստացում իրականացնելու վերաբերյալ հարցումն ստանալու փաստի հաստատում

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի հոդված 7«1» (ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Հարցում ստացած դատարանի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարանի անվանումը
4. Հարցում ստացած դատարան
 - 4.1. Անվանումը
 - 4.2. Հասցեն
 - 4.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 4.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 4.2.3. Երկիրը
 - 4.3. Հեռ.
 - 4.4. Ֆաքս
 - 4.5. Էլ-փոստ
5. Հարցումը ստացվել է (ստացման ամսաթիվը) վերը նշված 4-րդ կետում նշված դատարանի կողմից
6. Հարցումը չի կարող կատարվել, քանի որ.
 - 6.1. Հարցման ձևը լրացնելու համար օգտագործված լեզուն ընդունելի չէ (հոդված 5)
 - 6.1.1. Խնդրում ենք օգտագործել հետևյալ լեզուներից որևէ մեկը
 - 6.2 Փաստաթուղթն ըյուրընթեռնելի չէ (հոդված 6)

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Գ

Ապացույցների ստացման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվության տրամադրման հարցում

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի 8-րդ հոդված (ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Հարցում ստացած դատարանի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարանի անվանումը
4. Հարցում ստացած դատարանի անվանումը
5. Հարցումը չի կարող կատարվել առանց հետևյալ լրացուցիչ տեղեկատվության
6. Հարցումը չի կարող կատարվել քանի դեռ դեպոզիտ կամ կանխավճար չի կատարվել՝ համաձայն հոդված 18«3»-ի: Դեպոզիտը կամ կանխավճարը պետք է կատարվի հետևյալ կերպ.

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Դ

Դեպոզիտի կամ կանխավճարի ստացման հաստատում

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի հոդված 8«2» (ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Հարցում ստացած դատարանի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարանի անվանումը
4. Հարցում ստացած դատարանի անվանումը
5. Դեպոզիտը կամ կանխավճարը ստացվել է... (ստացման ամսաթիվը) վերոհիշյալ 4-րդ կետում նշված դատարանի կողմից

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Ե

Հատուկ ընթացակարգերի և (կամ) հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման խնդրանքի վերաբերյալ ծանուցում

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի հոդված 10«3» և «4» (ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Հարցում ստացած դատարանի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարանի անվանումը
4. Հարցում ստացած դատարանի անվանումը
5. Հարցման (Ձև Ա) 13.1 կետում նշված հատուկ ընթացակարգի համաձայն դիմումի կատարման պահանջը չէր կարող կատարվել, քանի որ.

5.1. պահանջվող ընթացակարգն անհամատեղելի է հարցում ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի հետ

5.2. պահանջվող ընթացակարգի իրականացումը հնարավոր չէ գործնական լուրջ դժվարությունների պատճառով

6. Հարցման (Ձև Ա) 13.1 կետում նշված՝ հաղորդակցության տեխնոլոգիաներ օգտագործելու խնդրանքը չէր կարող կատարվել, քանի որ.

6.1. հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործումն անհամատեղելի է հարցում ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի հետ

6.2. հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործումը հնարավոր չէ գործնական լուրջ դժվարությունների պատճառով

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Զ

Ծանուցում՝ ապացույցների ստացում իրականացնելու ամսաթվի, ժամի և վայրի, ինչպես նաև մասնակցության պայմանների մասին

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի հոդվածներ 11«4» և 12«5»

(ՊՏ L 174, 27.06.20012., էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Հարցում ստացած դատարանի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարան
 - 3.1. Անվանումը
 - 3.2. Հասցեն
 - 3.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 3.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 3.2.3. Երկիրը
 - 3.3. Հեռ.
 - 3.4. Ֆաքս
 - 3.5. Էլ-փոստ
4. Հարցում ստացած դատարան
 - 4.1. Անվանումը
 - 4.2. Հասցեն
 - 4.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 4.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 4.2.3. Երկիրը
 - 4.3. Հեռ.
 - 4.4. Ֆաքս
 - 4.5. Էլ-փոստ
5. Ապացույցների ստացում իրականացնելու օրը և ժամը
6. Ապացույցների ստացում իրականացնելու վայրը, եթե տարբեր է վերը նշված 4-րդ կետում նշվածից

7. Անհրաժեշտության դեպքում կողմերի և նրանց ներկայացուցիչների, եթե այդպիսիք կան, մասնակցության պայմանները

8. Անհրաժեշտության դեպքում, հարցում ներկայացրած դատարանի ներկայացուցիչների մասնակցության պայմանները

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Է

Ուշացման մասին ծանուցում

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի 15-րդ հոդված

(ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Հարցում ստացած դատարանի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարանի անվանումը
4. Հարցում ստացած դատարանի անվանումը
5. Հարցումը չի կարող կատարվել ստանալուց հետո 90 օրվա ընթացքում հետևյալ պատճառներով
6. Նախատեսվում է, որ դիմումը կկատարվի մինչև... (նշեք նախատեսված ամսաթիվը)

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Ը

Տեղեկատվություն հարցման արդյունքների վերաբերյալ

(Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի 14-րդ և 16-րդ հոդվածներ

(ՊՏ L 174, 27.06.2001թ, էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Հարցում ստացած դատարանի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարանի անվանումը
4. Հարցում ստացած դատարանի անվանումը
5. Հարցումը կատարվել է:

Հարցման կատարումը հաստատող փաստաթղթերը կցված են:

6. Հարցման կատարումը մերժվել է, քանի որ.

6.1. անձը, որը պետք է հարցաքննվի, օգտվել է ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքից կամ պնդել է, որ իրեն արգելված է ցուցմունք տալ.

6.1.1. հարցում ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն

6.1.2. հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն

6.2. Դիմումը չի մտնում սույն Կանոնակարգի գործողության ոլորտի մեջ

6.3. Հարցում ստացած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն, դիմումի կատարումը չի մտնում դատական իշխանության գործառույթների մեջ

6.4. Հարցում ներկայացրած դատարանը չի կատարել հարցում ստացած դատարանի՝ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու խնդրանքը՝ թվագրված... (դիմումի ամսաթիվը)

6.5. Հոդված 18«3»-ի համաձայն դեպոզիտ կամ կանխավճար կատարելու խնդրանքը չի իրականացվել

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Թ

Ապացույցների անմիջական ստացման վերաբերյալ հարցում

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի 17-րդ հոդված

(ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Կենտրոնական/հրավասու մարմնի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարան
 - 3.1. Անվանումը
 - 3.2. Հասցեն
 - 3.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 3.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 3.2.3. Երկիրը
 - 3.3. Հեռ.
 - 3.4. Ֆաքս
 - 3.5. Էլ-փոստ
4. Հարցում ստացած պետության կենտրոնական/հրավասու մարմինը
 - 4.1. Անվանումը
 - 4.2. Հասցեն
 - 4.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 4.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 4.2.3. Երկիրը
 - 4.3. Հեռ.
 - 4.4. Ֆաքս
 - 4.5. Էլ-փոստ
5. Հայցվորի կողմից ներկայացված հայցը
 - 5.1. Անունը
 - 5.2. Հասցեն
 - 5.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 5.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 5.2.3. Երկիրը

- 5.3. Հեռ.
- 5.4. Ֆաքս
- 5.5. Էլ-փոստ
- 6. Հայցվորի ներկայացուցիչները
 - 6.1. Անունը
 - 6.2. Հասցեն
 - 6.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 6.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 6.2.3. Երկիրը
 - 6.3. Հեռ.
 - 6.4. Ֆաքս
 - 6.5. Էլ-փոստ
- 7. Մեղադրյալի (պատասխանողի) դեմ
 - 7.1. Անունը
 - 7.2. Հասցեն
 - 7.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 7.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 7.2.3. Երկիրը
 - 7.3. Հեռ.
 - 7.4. Ֆաքս
 - 7.5. Էլ-փոստ
- 8. Պատասխանողի ներկայացուցիչները
 - 8.1. Անունը
 - 8.2. Հասցեն
 - 8.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 8.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 8.2.3. Երկիրը
 - 8.3. Հեռ.
 - 8.4. Ֆաքս
 - 8.5. Էլ-փոստ
- 9. Ապացույցների ստացումը պետք է կատարի.
 - 9.1. Անունը
 - 9.2. Պաշտոնը

9.3. Գործառույթները

9.4. Խնդիրները

10. Գործի բնույթը և առարկան, ինչպես նաև գործի փաստական հանգամանքների համառոտ շարադրանք (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

11. Իրականացվելիք ապացույցների ստացումը

11.1. Իրականացվելիք ապացույցների ստացման գործընթացի նկարագրություն (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

11.2. Վկաների հարցաքննություն

11.2.1. Անունը և ազգանունը

11.2.2. Հասցեն

11.2.3. Հեռ.

11.2.4. Ֆաքս

11.2.5. Էլ-փոստ

11.2.6. Վկային ուղղվելիք հարցերը կամ այն փաստերի շարադրանքը, որոնց վերաբերյալ նրանք պետք է հարցաքննվեն (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

11.2.7. Վկայություն տալուց հրաժարվելու իրավունք՝ հարցում ներկայացրած դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

11.3. Այլ ապացույցների ստացում (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

12. Հարցում ներկայացրած դատարանը ցանկանում է ապացույցներ ստանալ անմիջականորեն օգտվելով հաղորդակցության հետևյալ տեխնոլոգիաներից (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը

ՁԵՎ Ժ

Տեղեկատվություն՝ կենտրոնական (իրավասու) մարմնից

(«Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի (ԵՀ) 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 կանոնակարգի 17-րդ հոդված

(ՊՏ L 174, 27.06.2001թ., էջ 1))

1. Հարցում ներկայացրած դատարանի մասին տեղեկություն
2. Կենտրոնական (իրավասու) մարմնի մասին տեղեկություն
3. Հարցում ներկայացրած դատարանի անվանումը
4. Կենտրոնական (իրավասու) մարմին
 - 4.1. Անվանումը
 - 4.2. Հասցեն
 - 4.2.1. Փողոցը և փոստարկղի համարը
 - 4.2.2. Գտնվելու վայրը և փոստային ինդեքսը
 - 4.2.3. Երկիրը
 - 4.3. Հեռ.
 - 4.4. Ֆաքս
 - 4.5. Էլ-փոստ
5. Տեղեկատվություն՝ կենտրոնական (իրավասու) մարմնից
 - 5.1. Հարցման համաձայն ապացույցների անմիջական ստացումն ընդունվել է
 - 5.2. Հարցման համաձայն ապացույցների անմիջական ստացումն ընդունվել է հետևյալ պայմաններով (հավելվածում, որտեղ անհրաժեշտ է)
 - 5.3. Հարցման համաձայն ապացույցների անմիջական ստացումը մերժվել է հետևյալ պատճառներով
 - 5.3.1. Հարցումը չի մտնում սույն Կանոնակարգի գործողության ոլորտի մեջ
 - 5.3.2. Հարցումը չի պարունակում 4-րդ հոդվածի համաձայն ողջ անհրաժեշտ տեղեկությունները
 - 5.3.3. Ապացույցներն անմիջականորեն ստանալը, ինչի համար խնդրանք է ներկայացվել, հակասում է այդ կենտրոնական (իրավասու) մարմնի անդամ պետության իրավունքի հիմնարար սկզբունքներին:

Կատարված է

Օրը, ամիսը, տարեթիվը